Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝
ՊԱՐՈՆ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆԻՆ

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազորված անձ
Հայաստանի Հանրապետության քաղաքացի Էդուարդ Հովհաննիսյանից
/Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Տերյան 69,
Էլ. հասցե՝eduardhovhannisyan999@gmail.com, Հեռախոս՝+374 55150005/

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան
«15» մայիսի 2026թ.

ԻՐԱԶԵԿՈՒՄ
/հանրային հավաքի անցկացման վերաբերյալ/

Հարգելի՛ պարոն Փելեշյան,

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ:

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝

1. Հավաքի վայրը՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Արցախ պուրակի տարածք, ընդ որում հավաքի իրականացման ընթացքում հնարավոր են հարակից փողոցների երթևեկության սահմանափակումներ (Հանրային հավաքի ընթացքում օգտագործվելու է բեմահարթակ, որի նախապատրաստական աշխատանքները սկսվելու են 2026 թվականի մայիսի 25-ից, իսկ ապամոնտաժման աշխատանքները իրականացվելու են մինչև 2026 թվականի մայիսի 27-ը ներառյալ)
2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ 2026 թվականի մայիսի 26-ին ժամը 18:00 – 21:00
3. Հավաքի նպատակը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հունիսի 7-ի կայանալիք ընտրությունների ներքաղաքական և նախընտրական հարցերի քննարկում:
4. Մասնակիցների սպասվող թիվը՝ մինչև 5000 /հինգ հազար/ անձ:
5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ Հավաքների ազատության սահմանադրական իրավունքի իրացման ամենաարդյունավետ և նույնիսկ հենց Սահմանադրությամբ հիշատակված բացօթյա տարածքում տվյալ դեպքում իրազեկման ենթակա հավաքը իրացվելու է նաև անհրաժեշտ սարքավորումների ապահովմամբ՝ դրանով հավաքի կազմակերպվածության երաշխավորմամբ: Մասնավորապես

հնարավոր է տեղադրվի՝ բեմահարթակ, կոնստրուկցիաներ, բարձրախոսներ, ձայնի ուժեղարարներ, թմբուկներ, լեդ էկրան, տրանսպորտային միջոցներ, էլեկտրասնուցման համար անհրաժեշտ մալուխ և այլ տեխնիկական սարքեր: Հնարավոր է տեղի ունենան ելույթներ, հնչի հանրային խոսք

6. Հավաքին կարգադրիչներ չեն լինի:

7. Հավաքի ընթացքում երթ չի նախատեսվում:

8. Հավաքի կազմակերպչի տվյալները՝ Ազգանուն Անուն Հայրանուն՝ Բաղյան Գոռ Կառլենի, անձնագիր՝ [redacted], հեռախոս՝ [redacted], Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռի, Վանաձոր, Վանաձոր, [redacted] էլ. հասցե՝ eduardhovhannisyan999@gmail.com :

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հավաքի իրազեկման մեջ նշված ժամանակում և վայրում այլ, ներառյալ՝ հակադարձ ուղղվածությամբ հավաքի անցկացումն ինքնին հիմք չէ հավաքի նկատմամբ սահմանափակումների սահմանելու համար, եթե չկա դրանց մասնակիցների բախման անմիջական վտանգ: Տվյալ դեպքում ըստ ունեցած նախնական տվյալների այդ օրը նախատեսված չէ որևէ այլ անձի կողմից համապատասխան վայրում հանրային հավաք:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Սույն իրազեկումն ընդունել ի գիտություն:

Կից ներկայացնում եմ իմ և կազմակերպչի անձը հաստատող փաստաթղթերի լուսապատճենը և դաշինքի լիազոր ներկայացուցիչ հանդիսանալու փաստը հաստատող փաստաթղթի՝ վկայականի լուսապատճենը:

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունների
դաշինքի լիազորված անձ՝
Էդուարդ Հովհաննիսյան _____